ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 905 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՋՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հաշվի առնելով 2025 թվականի օգոստոսի 8-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի համատեղ հռչակագիրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման արդյունքների մասին և հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասը՝

1. Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հաղորդակցության ենթակառուցվածքների բացման, վերականգնման և ստեղծման ուղղությամբ աշխատանքների համակարգման, մասնավորապես՝ ենթակառուցվածքների (այդ թվում՝ երկաթուղային գծերի, ավտոճանապարհների, գազամուղների, նավթամուղների, էլեկտրական հաղորդալարերի, օպտիկամանրաթելային մալուխների) նախագծման և կառուցապատման աշխատանքների

կազմակերպման, ֆինանսավորման մոդելի մշակման, Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից համատեղ ընկերության ստեղծման և գործունեության բիզնես մոդելի մշակման, ինչպես նաև պահանջվող իրավական ակտերի և պայմանագրերի նախագծերի մշակման նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հաղորդակցությունների բացման հարցերով հանձնաժողով:

2. Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ